

վին եւ կեդրոնական վարժարանի յատկացեալ (Տես Պաշտօնաթիւր կանոնագիր եւ Յայտագիր Խնամակալութեան Ազգ. Կ. վրժ.ի Ղաւթիոյ. 1886 Տպ. Մ. Կ. Սարրեան Կ. Պոլիս, էջ 16—17: — Ջոր օրինակ այս տարի (1903—1904) եթէ առաւել 1750 Օսմ. ոսկի շահ կը բերէ Զաւիթիոյ կեդրոնականը (Նախակրթարանն ու Մանկապարտէզն ալ միասին), այս գումարին առաւել երկու հարիւր (= 200) ոսկին իսկ չգոյանար Թոշակներէն եւ հետեւաբար 1500 ոսկիէն աւելի գումար մը Ս. Լուսաւորիչն է որ կը հայթայթէ՝ իր ծնած կեդրոնականը պահելու համար: Մեծ, շատ մեծ փառք մ'է ասի Ս. Լուսաւորիչին, որուն հասոյթները սրճափ ալ նուազած ըլլան քանի մը տարիներէ ի վեր, եւ սակայն, ժամանակին, 1391էն եւ 1436էն սկսեալ, այսինքն՝ նոյն իսկ Քէֆէցի հայ վաճառականներէն, Կոլոտէն եւ իր արժանաւոր յաջորդներէն մինչեւ վարժապետեան Ներսէս Պատրիարք, այնչափ կալուածներ գնուած եւ հանգանակութիւններ եղած են որ, Ս. Լուսաւորիչը կրնայ պահել իր փառքը. փառք մը, որուն յարգն ու արժէքը աւելի եւս կը մեծնայ երբ նկատի առնուի Ս. Լուսաւորիչի ներքին զոհողութիւններն ու զրկումները:

* * *

Ես՝ որ բռնադատուած իմ պանդխտութեան կարեւոր մէկմասը Ս. Լուսաւորիչի մէջ կը մաշեցնեմ՝ տամուկ, անարեւ սենեկի մը մէջ, պատառ մը կապոյտ կամ մռայլ երկինքով. սենեակ մը, որուն լուծութիւնը կը խռովի վերէն դասարանի մը ամէնօրեայ երկրաշարժով, եւ վարէն՝ օթէլի ջրհանին ընդհատ աղմուկներով, իսկ դուրսէն գամբուշներու զօղանջիւններով եւ աւելի դուրսէն լաւերէնայի, փողոցային երաժշտութեան տաղտուկներով, այդ սենեակին մէջ՝ նուիրուած գրքի եւ գրչի սիրական, մոլեկան